ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

« 01 » «սեպտեմբեր» 2020 թ.
ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 87-Ա
ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԹԻՎ ՍՊ//16230-2020 ՀԱՆՁՆԱՐԱԿԱԿԱՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱԶԳԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՇԱՏԻՆԻ «ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՒՆ» ԿՈՉՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՄՆԵՐԸ ՉԱՓԱԳՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունիսի 16-ի թիվ ՍՊ//16230-2020 և 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ ՍՊ//23825-2020 հանձնարարականները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի 15-րդ փողոց, տուն 3/3 հասցեում գտնվող «Ուսուցչի տուն» կոչվող շինությունում Վազգեն Հայրապետյանի ընտանիքի կողմից զբաղեցված բնակելի

տարածքների մակերեսները չափագրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակից դարձնել ՀՀ «Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին:

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ